

Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ

ՀԱՅ ՁԵՌԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՆՈՒՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐԸ

(Գարեգին Ա Կաթողիկոսի մանվան 10-ամյակի առթիվ)

«Մենք պարծենալ կարող ենք ամենամոլամակիր ազգերի կողմից մեր 20 000 տարի կամ հազար ձեռագիրներով, որ պահված են հայ մտքի և անցյալի ամբողջ արտադրությունը. մեր ազգային ամենամեծ հարստությունը»:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ
(«Դեպի լույս և կյանք»,
Անթիլիաս, 1947, էջ 296)

Ա. ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Տասս տարի է անցել այն օրից, երբ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա Կաթողիկոսը, երկարատև ու ծանր հիվանդությունից հետո, առհավետ փակեց իր աչքերը, խոր սուգի մատնելով ոչ միայն Հայ Եկեղեցուն և ժողովրդին, այլև հայագիտությանը։

Անկարելի է խոսել ԺԹ դարի վերջի և հատկապես Ի դարի առաջին կեսի հայ մշակույթի պատմության մասին և չնկատել այն մեծ ու լուսավոր և անջնջելի հետքը, որ թողել է հանգուցյալը։

Շատ բեղմնավոր և անգնահատելի է եղել Գարեգին Ա Կաթողիկոսի վաստակը հայ մշակույթի, պատմության և արվեստի ասպարեզում։ Նրա տպագիր և անտիպ բազմապիսի գիտական աշխատությունների համառոտակի թվումն իսկ պատկառանք կարող է ազդել ամեն մի հայագետի։ Սակայն Գարեգին Ա Կաթողիկոսը մեծ եղավ նաև իբրև մեծ և հայրենասեր հոգևորական։

Գարեգին Ա Կաթողիկոսի գիտակցական կյանքի ավելի քան վաթսուն տարիները հայրենանվեր աշխատանքների բացառիկ մի ոսկեշրջան կազմեցին ու փառքով պսակեցին մեծ հայրենասերին ու մեծ գիտնականին։

Ներկա հակիրճ ուսումնասիրության սահմաններում մենք հնարավորություն չունենք խոսելու ո՛չ նրա վարչական ու հասարակական հայրենանվեր աշխատանքների և ո՛չ էլ նրա բազմաբեղուն և բազմարովանդակ գործերի մասին։ Այդ բոլորը, անկասկած, առանձին ընդարձակ մենագրությունների նյութ կարող են հանդիսանալ։

Էջմիածնի մատենագարանապետ և թանգարանի ղեկավար, «Արարատ» հանդեսի խմբագիր, նվիրված տեսուչ Գևորգյան ճեմարանի և դասախոս հայ պատմության ու արվեստի, անզուգական հայրենասեր քարոզիչ, հայ Գողգոթայից մազապուրծ փրկված որբերին ու աղետյալներին հոգացող հայր, Հայրենիքի պաշտպանության նոր Ղևոնդ երեց, հոգևոր առաջնորդ Թիֆլիսից մինչև Նոր-Նախիջևան և ապա Հյուսիսային Ամերիկայի պանդուխտ հայորդիներին, Կաթողիկոսական լիազոր պատվիրակ բովանդակ սփյուռքահայության և հուսկ ուրեմն Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո։ Այս բոլորը ծանր ու դժվարին պաշտոններ են, որոնք մի շարք եռանդուն անձնավորությունների աշխատանք կարող են բնութագրել։ Եվ այդ բոլորը ինչպիսի՜ մեծ անձնազոհությամբ ու բացառիկ նվիրվածությամբ է կատարել նա և հաճախ վտանգել իր առողջությունը։

Որքան էլ այսօր մեզ զարմանալի թվա, ահա՛ հիշյալ մաշող աշխատանքների հետ զուգընթաց, Գարեգին Ա Կաթողիկոսը իրեն համար ժամանակ էր գտնում նվիրվելու գիտական աշխատանքների և իր թողած մեծարժեք գործերով նա կարողացավ իր պատկառելի տեղը ապահովել նաև հայագիտության մեջ։

Ազգագրագետ ու հնագետ, հայ ճարտարապետական հուշարձանների խուզարկու, գերեզմանական կոթողների և խաչքարերի արվեստի լեզուն բացահայտող, հայ ձեռագրագիտության երախտավոր, հայ մանրանկարչության ուսումնասիրման հիմնադիր, հայ պատմության բեղմնավոր աշխատող, միջնադարյան հայ քնարերգության ուսումնասիրող, հայ հնագիտության մեծ վարպետ, հայ մանրարվեստների առաջին հետազոտող, մի խոսքով հազվագյուտ մի մտքի տիտան, որն իր ամբողջ կյանքը նվիրաբերել է հայ ժողովրդի անցյալի արժեքները մթության միջից լույս աշխարհ բերելուն, ուսումնասիրելուն և արժեքավորելուն։ Սակայն ինչպիսի՜ ջերմ սիրտ և անհուն սեր է դրել նա իր յուրաքանչյուր աշխատության մեջ։

Հայագիտության գրեթե բոլոր ճյուղերում կարելի է հանդիպել Գարեգին Ա Կաթողիկոսի մատուցած կարևոր ծառայություններին, ծառայություններ, որոնց արժեքը տակավին լրիվ հայտնի չէ բանասիրությանը, քանի որ նրա մեծարժեք վաստակի մի խոշոր մասը դժբախտաբար դեռևս շարունակում է մնալ անտիպ։ Սակայն նրա թողած բազմաթիվ մենագրություններն ու զանազան հատորներում ցրված ուսումնասիրություններն իսկ բավական էին, որ անկեղծ գիտնակա-

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԵՐՋԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

նին ապահովեին իր մնայուն տեղը հայագիտության անդաստանից ներս։

Ընդանրապես Գարեգին Ա Կաթողիկոսի մասին ընդունված է ասել, որ նա անկոխ գետինների գիտնականն է հանդիսացել, և այդ շատ ճշմարիտ է, քանի որ նրա ուսումնասիրության առարկան, նյութը, կա՛մ բոլորովին մինչև ինք ոչ ոքի կողմից ուշադրության արժանացած չի եղել, և կամ՝ բավարար չափով չի եղել։ Նա միշտ խույս է տվել հայագիտությանը երկար զբաղեցրած և կամ վիճելի և հաճախ էլ անլուծելի հարցերից։ Նրա ուսումնասիրությունների մեջ հեշտ աշխատանքի արդյունք եղող գործերը իսպառ բացակայում են, նա հաճախ ոչնչից ստեղծում, հայտնաբերում և համադրում է այնպիսի խճանկարային տիպի գործեր, որոնք արգասիք են երկար տարիների բազմակողմանի և համառ պրպտումների և ուսումնասիրության։

Հայ անցյալի արժեքները ուսումնասիրելու բացառիկ սերը դեռ շատ վաղ էր հանդես եկել նրա սրտում։ Գարեգին Ա Կաթողիկոսը իր հուշերում նկատի ունենալով 1887 թվականի ամռանը մեծանուն հայագետ Մանուկ Աբեղյանի գլխավորությամբ դեպի հայ Բագրատունյաց Անի մայրաքաղաքը կատարած ուխտավորական և հնագիտական ճանապարհորդությունը, գրել է. «Իմ պատանեկության

ընթացքում իսկ սեր եղել է իմ մեջ Հայրենիքի ավերակների հանդեպ։ Անիի ճանապարհի ավերակների հանդեպ։ Անիի ճանապարհի հորդությունը իմ մեջ խորը տպավորություն է թողել դեպի անցյալը, հնությունը, դեպի մեր հին փառքերը»[1]։

Ղարաբաղի Ջիվանշիր գավառի Ջարտախլու գյուղից էջմիածին եկող պատանին, որի մայրը իր զարդարանքները պոկելով իր մայրենի դարդարանքներ էր ուսման, մի օր դառնալու էր հայ ժողովրդի ամենամեծ հայրենասերներից և գիտնականներից մեկը։ Գարեգին Հովսեփյանցը էջմիածնում իրեն ուսուցիչ էր ունեցել նշանավոր մանկավարժ Սեդրակ Մանդինյանին, հայտնի բանաստեղծ Կարապետ Կոստանյանին, պատմաբան Ստեփանոս Գալատանյանին (ընկ Ռումինիայի Բոտոշան քաղաքից), Հայ Եկեղեցու նշանավոր գործիչ և պատմաբան Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանին, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանին և ուրիշներ։

1882—1887 թվականներին Հովսեփյանցը մեկնում է Գերմանիա և Լայպցիգի, Հալլեի ու Բեռլինի համալսարաններում խորացնում իր ուսումը լամբռեխտի, Հառնակի, Վունտի և այլ խոշորագույն գիտնականների մոտ ու մեծ հաջողությամբ ստանում է փիլիսոփայության դոկտորի աստիճան։

Ջափազանց հարուստ գիտելիքներով զինվելուց հետո, սկսած իր վաղ երիտասարդությունից մինչև իր խոր ծերությունը, նա մնում է հավերժական ճանապարհորդ։ Գյուղից գյուղ, քաղաքից քաղաք ու երկրից երկիր ծայր են առնում իր որոնումները, ընտրած մեծարժեք նյութերի համար ատաղձներ կուտակելու նպատակով։

Ինչպես Արևելյան, այնպես և Արևմտյան Հայաստանի բազմաթիվ վայրերում և վերջապես Սփյուռքի շատ երկրներում կարելի էր տեսնել մեծ ու անընկճելի խուզարկուին, մերթ պատանու նման մագլցելիս հայկական հուշարձանների բարձունքն ի վեր կամ երկար կռանալիս մի ձեռագրի փոշեթաթախ էջերի վրա։ Ամեն տեղ էր նա։ Հաճախ կարելի էր տեսնել նրա խորաթափանց ու վառվռուն աչքերը, որոնք աննկարագրելիորեն կայծկլտում էին անհուն երջանկությամբ, յուրաքանչյուր անգամ երբ նրան բախտ էր վիճակվում գտնել և լույս աշխարհ հանել հայ արվեստի անհայտ մի բեկոր, լիներ դա մամոտած մի խալաթ, թե խունացած մագաղաթյա հավերժ կորած մի ձեռագրի երկաթագիր պատառիկ։ Դժվար է, ինչպես Հայրենիքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, գտնել ճարտարապետական կամ ձեռագրական հայկական մի հուշարձան, որը նրա ուշադրությունից դուրս մնացած լիներ։

Ավելին. նա տեսել և ուսումնասիրել է այնպիսի հուշարձաններ, որոնք մինչև հայկական կոտորածները դեռևս պահում էին իրենց գոյությունը, իսկ հետո արդեն իսկ ոչնչացվել էին իսպառ։

Գարեգին Հովսեփյանցը դեռ սարկավագ էր, երբ հանդես եկավ իբրև ազգագրագետ, հայ ժողովրդական բանահյուսության փրկրանքները ոչնչացումից փրկելու մեծ սիրով և գովելի նախաձեռնությամբ։ Դեռ 1892 թվականին էր, որ նա հրատարակեց «Սասմա ծռեր» ժողովրդական վեպի չորս պատում, մեկը Աբարանի և չորսը Մոկաց բարբառներով, ինչպես նաև իր «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից» գործը, ապա «Խոստան-Զալ» վեպը և նրա ուսումնասիրությունը։ Այս գործերում հայ բանասիրությանը հայտնի էին դառնում նրա անսահման սերն ու նվիրվածությունը հայ բանահյուսության գոհարները ժամանակի ժանգից փրկելու և ստեղծող ժողովրդի սեփականությունը դարձնելու մասին։ Այսպիսով Գարեգին սարկավագը, Գարեգին վարդապետ Սրվանձտյանից և Մանուկ Աբեղյանից հետո, երրորդ գիտնականն էր, որ հայտնաբերեց մեր դյուցազնավեպի նոր պատումները։

Գարեգին սարկավագի «Սասմա ծռեր»-ի պատումները հետագայում մաս կազմեցին Հայաստանի պետական հրատարակչության կողմից հրատարակված և ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի խմբագրությամբ և պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի աշխատակցությամբ պատրաստված «Սասնա ծռեր» հոյակապ գործին։ Հետաքրքրությունից զուրկ չէ այդ գործի խմբագրության կողմից ավելացված հետևյալ ծանոթությունը. «Գարեգին Հովսեփյանը գրի առած է եղել նաև ուրիշ պատումներ, որոնց ձեռագիրները կորած են»[2]։

Պետք է նշել, որ Գարեգին Հովսեփյանցը հայ ազգագրության հետ հետագայում ևս իր կապերը չի խզել։ Պետական Մատենադարանում պահվող Գարեգին Հովսեփյանցի դիվանի մի վավերագրից երևում է, որ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, Արևմտյան Հայաստանից գաղթող հայերի մոտ դեռևս առկա եղող ժողովրդական տարազը, նիստուկացը և այլն փրկելու դիտավորությունից տարված, իր սեփական նեղ միջոցներով 1917 թվականի հունվարին ազգագրական նյութերի կարևոր մի ժողովածու է կազմել և ցանկացել է ստեղծել նույնիսկ այդ նյութերից ազգագրական մի թանգարան։ Ահա թե ի՛նչ էր գրում Հովսեփ-

[1] «Հշտակ», 1953, հոկտեմբեր—դեկտեմբեր, էջ 483.

[2] «Սասնա ծռեր», խմբագրեց պրոֆ.-դոկտ. Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ա հատ., Երևան, 1936, էջ 122.

յանցը հայտնի հայագետ Նիկողայոս Մառին. «...նկատելով, որ ներկա գաղթականության հետ մեր ժողովրդի տարազն ու նիստուկացը, զարդն ու զարդարանքը, արվեստը, բանահյուսությունը, բարբառները վտանգի են ենթարկված, հաջողեցրի մի փոքրիկ գումար ձեռք բերել և Ճեմարանի կարող ուսուցիչներից մի հանձնաժողով կազմել այդ խնդիրներով զբաղվելու։ Մի տարվա ընթացքում մի չնչին գումարով (600 ռ.) հաջողել է մեզ արդեն պատկառելի մի ժողովածու կազմել, որ դրսում տասնյակ հազարներով ձեռք բերել կարելի չէ։ Այժմ տքամաղրելի է ինձ ավելի մեծ գումար, և հույս ունեմ, թե կարճ ժամանակից հետո հնարավորություն պիտի ունենամ մի փոքրիկ ազգագրական թանգարան կազմելու չափ նյութ ունենալու։ Նամակի շարունակության մեջ Գ. Հովսեփյանցը գրում է նաև, որ ինք նպատակ ունի պատրաստել տպագրության նաև ազգագրական նյութերի մի ժողովածու և գունավոր մի քարտեզ գաղթականների տարազն ու ձեռագործը, զարդն ու զարդարանքը ցուցադրող։ Սակայն զանազան դժվարությունների հետևանքով հնարավոր չեղավ իրականացնել նրա այս գնդեցիկ ծրագիրը։

Գարեգին Կաթողիկոսի գիտական գործերի շարքում նշանակալից տեղ են գրավում նաև նրա մատենագրական ուսումնասիրությունները։ Այդ տիպի աշխատություններից են նրա «Մխիթար Սասնեցի» (1899), «Խորենվիկ բարգմանիչ» (1899), «Թոմա Մեծոփեցու կյանքը» (1914), «Մխիթար Այրիվանեցի» (1931) և այլ գործերը, որոնք նախ իբրև ուսումնասիրություն հոդվածներով և ապա առանձին գրքերով լույս են տեսել և հայագիտության կողմից բարձր դնահատանքի են արժանացել։

Նրա շարունակ որոնող, համադրող մտքի արդասիքն են հանդիսանում նաև պատմական մի շարք կարևոր գործերի լույս ընծայումը։ Այս շարքում Նրա գլուխ-գործոցն է «Խաղբակյանք կամ Պոռչանք Հայոց պատմության մեջ» (1928—1943) եռահատոր աշխատությունը, որը պսակվեց Երուսաղեմի «Թարգմանչաց-Դուրյան» մրցանակով։ Այս գործում հեղինակը հանդես է եկել թե՛ պատմաբանի, թե՛ բանասերի, թե՛ հնագետի և թե՛ մատենագրագետի բազմապիսի խոր հատկություններով։ Անվանի հայագետ Նիկողայոս Ադոնցը, նկատի ունենալով Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցի այս աշխատության մեծ արժեքը, մրցանակաբաշխության առիթով իր գրած քննական տեղեկագրում ամենից առաջ բարձր գնահատական էր տալիս այն բանին, որ հեղինակը միշտ հետամուտ է եղել նորություններ բերել հայ բանասիրությանը։ Ապա մեծ գովեստով խոսում է սկզբնաղբյուրների նկատմամբ հեղինակի ունեցած մեծ բարեխղճության մասին։ «Չկա համարյա մի արձանագրություն ուրիշներից արտագրված,— գրում է Ն. Ադոնցը,— ուր որևէ ուղղում կատարած լինի, բառ թե տառ, թե ամբողջ նախադասություն և մանավանդ տեղի և անձանց անունները։ Նկատի ունենալով այս աշխատության մնայուն արժեքը, Ն. Ադոնցը այն իրավամբ համարում է «Հայ մշակույթի պատմության մի խոշոր նպաստ»[4]։

Այս նույն շավիղով է նա շարունակել իր աշխատանքները, ստեղծելու համար Աղիզբեկենց, Օրբելյան և այլ իշխանական տոհմերի պատմությունը, որոնց մասին մինչև ինքը ոչ ոք առանձին ուսումնասիրություն չէր պատրաստել։

Հայ միջնադարյան գրականության պատմության համար կարևոր են նաև Գարեգին Ա Կաթողիկոսի կողմից Գրիգոր Աղթամարցու և Հովսեփ Սեբաստացու կյանքին ու գործունեության նվիրված ուսումնասիրությունները։

Գարեգին Կաթողիկոսի տարբեր բնագավառների վերաբերող վերոհիշյալ աշխատություններին ոչնչով չեն զիջում նաև նրա պատմահնագիտական գործերը։ Այս շարքից հատկապես ուշադրավ են նրա «Պտղեվանքը և գմբեթավորումը հայ տաճարներում», ինչպես նաև «Գերեզմանական կոթողներ և նրանց ճնշգիտական արժեքը հայ արվեստի պատմության համար» ուսումնասիրությունները։ «Պտղնիի եկեղեցին ուսումնասիրված չէր, ոչ հայ մասնագետ Թորոս Թորամանյանի և ոչ ավստրիացի գիտնական Ստրչիգովսկիի կողմից։ Իր «Պտղեվանքը և գմբեթավորումը նախնական հայ տաճարում» ուսումնասիրության մեջ՝ Գարեգին Վեհափառ կցայտեցնել ամբողջ կարևորությունը այս շենքին՝ հայկական ճարտարապետության համար։ Ճշտելով հիմնադրին իրեն անձնավորությունը և գտնելով թվականը, ուր ապրած է անիկա, ցույց կուտա, թե 9 դարու այս եկեղեցին Հայաստանի մեջ պահված ամենեն հին գմբեթավոր եկեղեցիի նմուշն է, և կուտա նաև ուրիշ փաստեր ճարտարապետության այս ձևի գործածության։ Մյուս աշխատության մեջ դարձյալ

[3] Հայկական ՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան Պետական Մատենադարանի դիվան, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցի թղթապանակ, № 96, վավերագիր № 78։

[4] Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, «Խաղբակյանք կամ Պոռչանք Հայոց պատմության մեջ», հատ. Գ, Նյու-Յորք, 1942/3, ժԵ—ժէ։

[5] Սիրարփի Տեր-Ներսեսյան, «Ակնարկ մը Գարեգին Հայրապետի գիտական աշխատություններուն վրա» «Հասկ», 1952, է—Թ, էջ 270—274։

Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը առանձին է, որ հնագետների ուշադրությունն է հրավիրում գերեզմանային կոթողների ուսումնասիրության ունեցած կարևորության վրա։ Նման տիպի պատմահնագիտական կարևոր գործերից է նաև հեղինակի «Հավուց դարի Ամենափրկիչը» ուսումնասիրությունը։

Բազմահմուտ հեղինակը իր ուշադրությունը բևեռել է նաև հայկական մանր տեսակի արվեստների վրա, որոնք առհասարակ դեռևս հայ հնագիտության կողմից անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել։ Այդպիսին է նրա «Հնության նշխարներ» հոդվածը[6], որտեղ նա զբաղվում է մի շարք մանր արվեստի արտադրությունների ուսումնասիրությամբ, ինչպես քրիստոնեական շրջանի դամբարաններով, ճրագներով և ջահերով, որոնք հայտնաբերվել էին Անիից, Վայոց ձորից, Ջրաբերդի Եղիշե Առաքյալի վանքի մոտից։ Նման տիպի գործերից են նաև Խոտակերաց Ս. Նշան մի նմուշ ԺԳ դարու հայ ոսկերչության» (Թիֆլիս, 1912), «Լուսավորչի խաչվարը»[7] և այլն։

Ուշադրավ են հայկական հինավուրց վանքերի դռների փայտի վրա կատարված փորագրությունների արվեստին նվիրված նրա ուսումնասիրությունները։ Այդ շարքից են Գարեգին Ա Կաթողիկոսի «Սեանա Առաքելոց վանքի հարավային դուռը»[8] և «Մուշի Առաքելոց վանքի դուռը»[9] հոդվածները։ Հետաքրքրաական են նաև հայ արվեստի տարբեր բնագավառներին վերաբերող նրա հետևյալ գործերը. «Հին հայոց դրամները»[10], «Փիլիպոս կաթողիկոսի արծվի գորգը»[11], «Մանր արվեստի օրինակներ Երուսաղեմի վանքից»[12], «Էջմիածնի Տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը ԺԷ—ԺԸ դարերում»[13]; «Տիրացու Հովհաննես տաղանդավոր նկարիչ ԺԷ դարու առաջին քառորդում (Երուսաղեմի Ս. Հակոբի վանքում նրա նկարած գործերի մասին)»[14] և այլն։

Գարեգին Ա Կաթողիկոսի անունը հայտնի էր նաև միջազգային գիտությանը։ Նրա գործերից ոմանք լույս են տեսել նաև ռուսերեն, գերմաներեն, ռումիներեն և, որքան մեզ հայտնի է, թարգմանված են եղել նաև անգլերեն։

Ինչպես երևում է Մատենադարանում պահված մի վավերագրից, դեռևս 1902 թվականի մարտի 24-ին Գարեգին վարդապետը ընտրվել է Մոսկվայի Կայսերական հնագիտական ընկերության Կովկասյան բաժանմունքի իսկական անդամ[15]։ Տարիներ անց, երբ նա կրկին Գերմանիայում էր և պրպտումներ էր կատարում գրադարաններում, գերմանացի մի գրադարանապետ առանց գիտենալու, թե ինչ ում հետ գործ ունի, նրան առաջարկել էր նույնինքն Գարեգին վարդապետ Հովսեփյանցի գերմաներեն աշխատությունը, որը Նրա թեզն է եղել։

Անհրաժեշտ է նշել նաև լրացման կարգով, որ Գարեգին Հովսեփյանցը պրոֆ. Մառի գլխավորությամբ մասնակցել է Գառնիի Տրդատա թախտի պեղումներին և հայտնաբերել Տրդատ թագավորի հունարեն մի արձանագրությունը։ Քասախ գետի սկզբնավորման տեղում, 1917—1920 թվականներին նա մասնակցել է նաև Անիի պեղումներին։ Ապա դարձել է Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի եռանդուն անդամը, ինչպես նաև Հայաստանի Գիտական ինստիտուտի անդամ (Էջմիածնում)։

Գարեգին Ա Կաթողիկոսը Իր հայտնաբերած և հավաքած բազմաթիվ հնությունները, դրամները և ձեռագրերը նվիրել է Մայր Աթոռի թանգարանին և Մատենադարանին։

Գիտական մեծ արժեք են ներկայացնում Գարեգին Ա Կաթողիկոսի կողմից 1935 թվականից հրատարակվել սկսած «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» շարքը, որից պարբերաբար լույս տեսան միայն 5 պրակներ՝ Երուսաղեմում, Նյու-Յորքում և Անթիլիասում։ Այդ պրակներից մենք վերևում առիթ ունեցանք խոսելու միայն Պտղեվանքին նվիրված նրա ուսումնասիրության մասին, սակայն դեռ ի՞նչքան հարուստ և ուսանելի նյութեր են նրանք իրենց մեջ բովանդակում։ Այս շարքի արժեքի լավագույն բնորոշումը տալիս է մեզ նույնինքն մեծանուն հեղինակը. «Այս պրակների մեջ կզետեղվեն հարտարապետության և մանրանկարչության, մանր արվեստների՝ ոսկերչության, ասեղնագործության, փայտի քանդակագործության, հախճապակեղենների վերաբերյալ նյութերի հրատարակություններ և ուսումնասիրություններ, ինչպես և պատմական-մատենագրական, որոնք ապագա շեն-

[6] «Տարազ», Թիֆլիս, 1909, № 1, էջ 8—9։

[7] «Սեանա պարբերագիրք», Ա, Հալեպ, 1946, էջ 70—74։

[8] «Անահիտ», Փարիզ, 1932, № 5—6, էջ 25—41։

[9] «Զվարթնոց» տարեգիրք, Փարիզ, 1937, էջ 146—150, և «Տարոնի տարեգիրք», 1949։

[10] «Տարազ», Թիֆլիս, 1902, № 20 և 22։

[11] «Հասկ» ամսագիրք, Անթիլիաս, 1945, ԺԱ—ԺԲ։

[12] «Գայթար», նոր տարվա բացառիկ, 1950, էջ 237—252։

[13] «Հասկ» հայագիտական տարեգիրք, Բ տարի, Անթիլիաս, 1949—1950, էջ 210—246։

[14] «Հասկ» հայագիտական տարեգիրք, Գ տարի, Անթիլիաս, 1957, էջ 26—52։

[15] «Էջմիածին», 1932, № VII, էջ 41։

քի ամբողջության ատաղձ կարող են ծառայել»[16]։

Այստեղից էլ ակներև է, որ բազմահմուտ գիտնականը Իրեն համար հեռավոր նպատակ էր դրել առանձին մենագրությունների միջոցով ստեղծել բովանդակ հայ մշակույթի և հայ արվեստի լիակատար պատմությունը, որը դժբախտաբար կիսատ մնաց և այժմ էլ հայագիտության մեջ նման մի գործի պակասը զգալի է տալիս իրեն։

Ահա միանգամայն շատ համառոտ և թերի մի ակնարկ հայագիտության մի հսկայի բազմաբեղուն գործունեության մասին, որը կարծում ենք, որ կարող է բավական լինել համոզելու համար, որ դրեթե գոյություն չի ունեցել հայ մշակույթի, արվեստի և պատմության մի բնագավառ, որի վրա անհուն նվիրումով իր խորաթափանց միտքն ու ուշադրությունը բևեռած չլիներ Գարեգին Ա Կաթողիկոսը։ Նրա անբասիր անձնավորության օրինակը և թողած գիտական մեծարժեք ժառանգությունը միանգամայն օրինակելի են և ուսանելի։

Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանցը համապարփակ մտքի տեր անվանի գիտնական էր։

Բ. ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐ ԳԱՆՁԵՐԻ ԱՆՁՈՒԴԱԿԱՆ ԽՈՒՅԶԱՐԿՈՒՆ

Ինչպես տեսանք, հայ արվեստը, հայ մշակույթը իր ընդհանուր բաժանումներով և շրջաններով և առհասարակ բովանդակ հայագիտությունը Գարեգին Ա Կաթողիկոսին հավասարապես հետաքրքրել են և դարձել են նրա մեծարանքի առարկան։ Սակայն այս բոլորի մեջ եղել է մի բնագավառ, որտեղ ամենից ավելի երկար է տքնել նրա բեղուն միտքը, մի ասպարեզ, որտեղ ամենից ավելի հարուստ է եղել նրա թողած գիտական վաստակը։ Այդ հայերեն ձեռագիր գանձերի հարուստ աշխարհն էր, որը վաղ հասակից մինչև կյանքի վերջալույսը հանդիսացել է նրա կյանքի իմաստն ու խորհրդանիշը։

Գարեգին Ա Կաթողիկոսից առաջ հայ ժողովրդի անվանի մշակներ Հ. Ղ. Ալիշանը, Ն. Քարամյանցը, Հ. Հ. Տաշյանը, Հ. Բ. Սարգիսյանը և ուրիշներ շնորհակալ աշխատանք էին կատարել հայերեն ձեռագրերի ուսումնասիրության ասպարեզում, սակայն ոչ ոք, բացի Իրենից, չի փորձել հայ ձեռագրագիտությունը իր ամբողջությամբ ուսումնասիրության նյութ դարձնել և այդ գանձերը բազմակողմանի արժեքավորման ենթարկելով մատուցել դրանց ծնունդ տվող մայր ժողովրդին։

Մինչև Գարեգին Ա Կաթողիկոսը, ոչ ոք այնքան մոտից հաղորդակից չի եղել աշխարհով մեկ սփռված մեր ձեռագրերին և ոչ ոք այնքան խոր և բազմակողմանի կերպով չի ուսումնասիրել նրանց մեջ թաքնված մեր մշակույթի անսպառ գանձերը։ Սկսած հայ գրի գարգացման հնագրական հարցերից, մեր ձեռագրերի հմայիչ մանրանկարչության առաջին ուսումնասիրություններից մինչև ձեռագրերի թանկագին հիշատակարանների հսկա հավաքումները, և ձեռագիր բեկորների արժեքի վրա ուշադրություն հրավիրելը և վերջապես գրչագրերի կազմելի արվեստը և կողերին փակցված դիպակների առաջին ուսումնասիրությունը հայագիտությունը պարտական է Գարեգին Ա Կաթողիկոսին։

Այստեղ դանդ ենք առնում դեռևս հիշատակել անվանի գիտնականին պատկանող պատմական, հնագիտական և բնագրագիտական այն բազմաթիվ մենագրություններն ու հոդվածները, որոնք բոլորն էլ մեծ մասամբ բխում են ձեռագրերի աշխարհում իր կատարած երկար ու համառ պրպտումներից, մի խոսքով նրանք գրեթե խարսխված են ձեռագրերի ընձեռած թարմ նյութերի վրա։ Բավական է հիշատակել, որ մեծ խուզարկուի գլուխ-գործոցներից մեկի՝ «Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ» աշխատության հիմքում ընկած են ոչ միայն ստվար թվով քարեղեն արձանագրություններ, այլև 91 ձեռագրային հիշատակարաններ, դեռ առանց հաշվելու ձեռագրական այն հարուստ և թարմ տվյալները, որոնք օգտագործվել են հիշյալ գործի զանազան էջերում։

Իրրև մատենադարանապետ էջմիածնի մատենադարանին, Գարեգին վարդապետ Հովսեփյանցը երկար տարիներ թաղվելով ձեռագրերի այդ ճոխ հավաքածուի մեջ, անսպառ նյութ էր կուտակել Իր ծրագրած նշանավոր աշխատությունների համար։ Գրեթե Իր բոլոր առավել կարևոր գործերի հիմքը հանդիսացել է էջմիածնի մատենադարանը, սակայն պետք է նշել, որ նա այդքանով միայն բավարարվող գիտնական չէր։ Այդ է պատճառը, որ նա, չնայած Իր փոքր կազմվածքին և ոչ քաջառողջ վիճակին, սլանում էր այնտեղ, ուր գտնվում էին հայերեն ձեռագրերի մնացյալ խոշոր կամ փոքր շտեմարանները։

Մայրաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը մեծ սեր էր տածում դեպի Գարեգին վարդապետը, որը եղել էր իր աշակերտը և իր ճարտար միջոցներով ուսանելու էր ղրկվել Գերմանիա։ 1911 թվականի մայիսի 22/4-ին

16 Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանց. «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության», պրակ Ա, Երուսաղեմ, 1935 (առաջաբանից)։

Պերայից գրած իր նամակում Օրմանյանը գտնում էր, որ Գարեգին վարդապետ Հովսեփյանցը անհրաժեշտ է որ մեկնի արտասահման և մի շարք մատենադարաններում պրպտումներ կատարելու միջոցով ճոխացնի իր ծրագրած գործերը։ Օրմանյանը ի միջի այլոց գրում էր. «Դուն ալ իմ խելքս ես, գրական աշխատությանց մեջ փնտռելով միակ մխիթարությունը...»[17]։ Նամակի վերջում Նա մատենադարանների և մի շարք ձեռագրերի մասին ցուցմունքներ էր տալիս։

Եվ ահա սկիզբ են առնում, ամբողջ կյանքում շարունակվելու համար, Գարեգին վարդապետ Հովսեփյանցի գիտական ուղևորությունները։ 1911, 1914, 1935 և 1947 թվականներին նա բազմիցս լինում է Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի ճոխ մատենադարանում։ 1911—1914 թվականներին այցելում է Արևմտյան Թուրքիայի և Անատոլիայի հայկական շրջանները։ Գնում է Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա, Սեբաստիա, Թոքատ, Ամասիա, Յոզգատ, Խանդալի և այլ քաղաքներ և ամեն տեղ որոնում, գտնում և ուսումնասիրում է պահվող հայերեն ձեռագրերը։ Լինում է Բեռլինի և Եվրոպայի մի շարք քաղաքների մատենադարաններում, ինչպես նաև ավելի ուշ ուսումնասիրում է Ամերիկայի ձեռագրատներում և առանձին հավաքողների մոտ պահվող հայերեն ձեռագրերի մեծ մասը։ Ի վերջո, կաթողիկոսության շրջանին քննում է նաև Անթիլիասի, Հալեպի, Բաղդատի և այլ վայրերի ձեռագրերը։

Եվ այսպես ավելի քան 60 տարի Գարեգին Ա կաթողիկոսը զբաղվել է հայերեն ձեռագրերի հետազոտությամբ։ Ինչպիսի՜ մեծ նվիրվածությամբ է, որ Նա Իրեն նվիրել է այս աշխատանքներին և ուշադրություն իսկ չի ընծայել ո՛չ Իր առողջությանը և ո՛չ էլ Իր սննդին։ Գարեգին վարդապետ Հովսեփյանցը 1911 թվականի հուլիսի 1-ին Երուսաղեմից Իր գրած անտիպ նամակով Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանցին նկարագրելուց հետո, որ Ինքը մեծ դժվարություն է կրել ճանապարհորդության ընթացքում և հիվանդացել է Կոստանդնուպոլսում, Երուսաղեմի մատենադարանում Իր կատարած աշխատանքների մասին գրել է հետևյալը. «.... Ս. Տեղապահ Տ. Դանիել արքեպիսկոպոսի կրտրուկ կարգադրության և Նշանյան Տ. Մեսրոպ վարդապետի սիրալիր աջակցության շնորհիվ հույս ունեմ, որ պիտի հաջողվի հետզհետե բոլոր կարևորները տեսնելու և օգտագործվելու։ Երեկ արդեն բացին Մատենադարանը և հատուկ մարդիկ նշանակվեցան ինձ համար մատյաններ հանելու. այսօր կանոնավորապես կսկսինք աշխատանքները և կշարունակենք։ Տասներկուսի չափ ձեռագիր արդեն ձեռքիս տակ են և շատ ընտիր նյութեր են պարունակում»[18]։

Նամակի շարունակության մեջ Նա գրում էր, որ Երուսաղեմում իրեն են հանձնել լավագույն բնակարան, ուր ժամանակին Խրիմյանն ու Իզմիրլյանն են ապրել և այլն։ Գարեգին վարդապետ Հովսեփյանցը Իր նամակը վերջացնում էր հետևյալ տողերով։ «Աղոթեցեք, Սրբազան Հայր, և օրհնեցեք այս ճանապարհորդությունը, որ արդյունավոր լինի։ Տարակույսներով, դժվարության հեռանկարներով լի է հոգիս, բայց ապավինել եմ Աստուծո հովանավորությանը»[19]։

Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանցը իր պատասխան նամակով թախանձագին խնդրում է Գարեգին վարդապետից Իր առողջության վրա հոգ տանելու, շարաշար աշխատանքից Իրեն խնայելու համար։ Միևնույն ժամանակ նամակագիրը կանխատեսում է նաև նրան սպասող մեծ ապագան։ Պարզյանցը գրում էր. «Ինձ կատարյալ իրավունք եմ համարում թախանձանոք խնդրել մեղմել սակավ ինչ աշխատանքն։ Երկայնամիտ լինելի եթե մի բան այս տարի չկա, նա, հառաջիկա տարին կարելի [է] շարունակել և հաղթանակով պսակել ուսումնասիրությունդ։ Աստված մեծ է, ես հույս ունեմ պիտի տեսնեմ այնպիսի օրեր, որ Ձեզ նմաններին Ազգիս հոգևոր իշխանությունն ստիպանոք և ամեն դյուրություններ տալով մղե ուսումնական տարաշխարհիկ վաստակների, միայն Ձեր կենաց անխայեցեք և լավ հրսկեցեք անձնական առողջությունն չվտանգելը»[20]։

Անցնում են տարիները, Գարեգին վարդապետ Հովսեփյանցը շրջում է դարձյալ գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, հետազոտում է վանքերի խորը, փոշիների տակ թաղված ձեռագիր գանձերը, հավաքում է վիմական արձանագրություններ, հայ արվեստի նշխարներ փրկում կորստից և նորանոր ատաղձներ կուտակում Իր կաթողական աշխատանքների համար։ Արդեն 1914 թվականին էր, առաջին համաշխարհային պատերազմի չարաշուք տարին, երբ տենդագին նախապատրաստվում էր նաև հայ ժողովրդի արևմտյան հատվածի ողբերգական սպանդը։ Օրմանյանը արդեն Երուսաղեմ էր ու թաղված Իր գիտական գործերի մեջ, իսկ Գարե-

17 Հայկական ՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան Պետական Մատենադարանի դիվան, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցի թղթապանակ, № 95, վավերագիր № 334, 1ա—2բ։

18 Նույն տեղում, վավերագիր № 336ա։

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում, վավերագիր № 336բ։

գին վարդապետ Հովսեփյանցը դեռևս անհագորեն ուսումնասիրում էր Թուրքիայում գտնվող մի շարք հայաշատ կենտրոնների հնությունները, նախագծելով կարծեք այդ վայրերի հայության և դրանց հետ հոգևոր բոլոր գանձերի մոտալուտ վախճանը։ Օրմանյանը, որ ուշի-ուշով շարունակում էր հետևել իր սիրելի աշակերտի հայրենանվեր գործերին, լսելով Գարեգին վարդապետի Կոստանդնուպոլիս, Սեբաստիա և այլուր գալը, 1914 թվականի հուլիսի 18 թվակիր իր նամակում ողջունում էր նրան գրելով. «Հաջողություն կմաղթեմ բանասիրական արշավանքիդ։ Այդ թախանձագին նրան հրավիրում էր գալ Երուսաղեմ և հայոց Ս. Հակոբ վանքում նվիրվել հետազոտական և մանկավարժական աշխատանքի. նշելով նաև, որ Գարեգին վարդապետ Հովսեփյանցը մեծ հեղինակություն է վայելում Երուսաղեմում։ Օրմանյանը նույն ժամանակ չի մոռանում որպես ցուցմունք նշելու նաև, որ Սեբաստիայից Երուսաղեմ գալու ճանապարհին նա շարունակի զբաղվել հայ անցյալի գանձերի հետազոտությամբ։ Ահա մի քանի տող Օրմանյանի կողմից Գարեգին վարդապետ Հովսեփյանցին հասցեագրված այդ ուշագրավ նամակից. «Այստեղ շատ կրկնված լսեցի Ձեր մտադրությունը միջոց ժամանակի մը Երուսաղեմ անցնելու, և գրչագիրներու ճոխ մատենագարանով զբաղելու։ Եվ Ձեր այս փափագը կհորդորեմ դիս յրշորեն հրավիրելու Ձեզ, որ այս մտադրությունդ չուշացնեք»։ Նամակի շարունակության մեջ գրում էր նաև, որ մոսկվարնակ Հ. Ժամհարյանի նվիրատվությունից քաջալերվելով, մտադիր է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի կողքին ընդարձակել ուսումը և բացել բարձր դասարաններ։ Այս կապակցությամբ էլ Օրմանյանը գրում էր.

«Եթե հաճիք մեզի հրամմել գալ, թե՛ մատենադարանն ու գանձարանը առատ նյութ կմատակարարեն նոր գիրք մը պատրաստելու չափ, և թե՛ մեր բարձրագույն դասարաններուն ուսուցիչը կճարվի, անշուշտ ոչ առանց պատշաճ փոխարինության։

Թախանձելով կսպասեմ հաջող պատասխանի մը։ Սեբաստիայէ Երուսաղեմ ցամաքի ճանապարհը կրնա նորանոր նյութեր ընծայել Ձեր հետազոտությանը։

... Այստեղ շատ մեծ և դերագրապես բարձր է Ձեր անձին հանդեպ համակրանքը և հարգանքը, և վստահ կրնաք բլալ սիրալիր և հարգալիր ընդունելությանը»[21]։

Նույն 1914 թվականին Գարեգին վարդապետ Հովսեփյանցը Բեռլինումն էր արդեն, ուր ուսումնասիրում է տեղի մատենադարանում պահվող հայերեն ձեռագրերը և ձեռնարկում է իր նշանավոր «Քարտեզ հայ մանրանկարչության» գործի տպագրության, նույն ժամանակ ուսումնասիրելու նպատակով անցնում նաև Փոքր Ասիայի հայ կենտրոնները, երբ պայթող առաջին համաշխարհային պատերազմը խանգարում է ամեն ինչ և նա մեծ դժվարությամբ ստիպվում է ձեռնունայն վերադառնալ Հայրենիք։

Սկսում է հայ ժողովրդի տաժանելի Գողգոթան։ Մեր ժողովուրդը կորցնում է իր կեսը, ծայր է առնում գաղթականությունը, իսպառ ոչնչանում են հայ մշակույթի անգին գոհարները։ Իրև մեծ հայրենասեր, մեծ է լինում Գարեգին վարդապետ Հովսեփյանցի նվիրվածությունը հայ ժողովրդի տառապանքի օրերին։ Ամեն տեղ էր նա, հասնում և ամոքում էր վիրավորի ու որբի ցավերը։

Տարիներ անց, ապրիլի 24-ի առթիվ կազմակերպված մի սգահանդեսում խոսելով հայ ժողովրդի նահատակության մասին, Գարեգին Ա Կաթողիկոսն ասում էր. «Բայց մեր կորուստը միայն այն չէ, ինչ որ հիշվեցավ։ Ոչնչացան հայ ժողովրդի անգնահատելի գանձերը. Մեր խոսքը նյութական գանձերի և հարստության մասին չէ. թեպետ այդ մարդում էլ մեր կորուստը անսահման էր, այլ՝ հոգևոր այն գանձերի մասին, որ ո՛չ ցեղը և ո՛չ ուտիճը պիտի ոչնչացներ, բայց ոչնչացրեց մոլեգնող էնվերների և Թալեաթների Թուրքական կառավարությունը՝ վանդալների և Ատիլաների բարբարոսությունից առավել աստիճաններով։ Ոչնչացել են Անկյուրիո, Կեսարիո և Արմաշի ձեռագրական հագարավոր հատորներից մեծ ժողովածուները կամ անհատների սեփականություն եղած հարյուրավոր ձեռագրերից բաղկացած ժողովածուները։ Մեր գիտցածով Անկյուրիո ձեռագրերների թիվն էր 310, բայց շատ կարևոր գեղարվեստական արժեքներով և բովանդակությամբ։ Արմաշի ձեռագրերների թիվն էր 223, որոնց ցուցակներն ունենք ձեռքի տակ, և այսպես մեր շատ վանքերի. Տրգատ եպիսկոպոս Պալյանի անձնական ժողովածուն ավելի քան 120 ձեռագիր. Վասպուրականի հազարավոր ձեռագրերներից կարելի եղավ փրկել միայն մոտավորապես 1350 հատոր։ Կարելի է մեր ունկնդիրներից ոմանք կմտածեն, թե ի՞նչ կապ ունեն ձեռագրերը այսօրվա հիշատակի հետ։ Այդպես չէ, սիրելիք, ամենամեծ կապը կա նրանց մեջ։ Այդ ձեռագրերների մեջ էր մարմնավորված հայ արվեստը, հայ մշակույթը, հայ միտքը, դարերի ընթացքում հայի ստեղծագործությունները, հայ հոգին, որոնց նույնպես նահատակության և ոչնչացման մեծ բաժին հասավ»[22]։

21 Նույն տեղում, վավերագիր № 417, տպ. «Էջմիածին», 1952, № VII, էջ 44—45։

22 Գարեգին Կաթողիկոս, «Դեպի լույս և կյանք», Անթիլիաս, 1947, էջ 319։

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք գտնում նշելու, որ Գարեգին Կաթողիկոսը հոգեկան մեծ հրճվանք էր զգում ի տես Բարգեն Աթոռակից կաթողիկոսի կողմից կազմված և եղեռնից մազապուրծ ազատված Անկյուրիայի Կարմիր վանքի և Ղալաթիայի Ազգային մատենադարանի կորած ձեռագրերի կազմած ցուցակների, և ժամանակավորապես մի կողմ թողնելով իր կոթողական գործերի հրատարակումը, մեծ խնամք էր տարել առաջին հերթին վերոհիշյալ ցուցակները տպագրության հանձնելու և հայ բանասիրությունը ճոխացնելու համար։ Այդ երկու ցուցակները բարեբախտաբար լույս տեսան[23], նրանցից առաջինը տպագրվում էր արդեն Վեհի կենդանության օրոք, սակայն լույս տեսավ մեծ ուշացումով։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման տարիներին նա իր վարած հողեվոր պաշտոնների հետ զուգընթաց ավելի մեծ թափով նվիրվում է գիտահետազոտական աշխատանքների։ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանցը մասնակցում է «Բանբեր» գիտական ժողովածուի հրատարակությանը, պատմական հուշարձանների շուրջ շարունակում իր հետազոտությունները, կարդում դասախոսություններ և օրեցօր ճոխացնում և մշակում իր գլխավոր աշխատությունները։

1934 թվականին արդեն Գարեգին արքեպիսկոպոսը Սփյուռքում է՝ իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոսի լիազոր պատվիրակ։ Հայրենիքից հեռու գտնվող տասնյակ հայկական գաղութներում, Մայր Հայրենիքի ու էջմիածնի ջերմ ողջույններն է տանում, ոգեվորում և հայրենասիրական ջերմ շնչով համակում բոլորին։ Սկսած Ռումինիայից մինչև Ֆրանսիա, Սիրիայից մինչև Ամերիկա մագնիսացնում է տարագիր հայերին Մայր Հայրենիքի խորհրդանիշ հավերժական Արարատով, հմայում հայ մշակույթի անմահ գոհարների արժեքով և ամեն մի հայի սրտում կարծես մի մասնիկ է սփռում իր մեծ հոգու անսպառ գանձերից։ Ո՞վ միթե չի կարող հիշել, ինչ տարիքի էլ պատկանելիս լիներ այն ժամանակ, մանուկ թե տարեց, Նրա բոցաշունչ խոսքերը, սրտերի խորքը թափանցող Նրա հրաշալի մտքերն ու ջերմ ներբողականները՝ նվիրված վերազարթնող Հայրենիքին ու հայ մշակույթին։

1938 թվականին դառնում է Ամերիկահայ թեմի առաջնորդ, ծանրաբեռնվում է կրկին վարչական ու հասարակական բազմապիսի դժվարին աշխատանքներով, սակայն գիտնականը նրա մեջ չի լռում. Ճիշտ է, նա իր եռանդը ի սպաս է գնում Ամերիկայի հայ գաղութի համերաշխության և հայ կյանքի ծաղկման, հիմնադրում «Հայաստանյայց եկեղեցի» հանդեսը և նախաձեռնում բազմաթիվ օգտավետ գործեր, սակայն գիտնականը դարձյալ կանգուն է. նա ժամանակ է ստեղծում Ամերիկայի քաղաքները շրջելու և ուսումնասիրում է անհատական սեփականություն դարձած, ինչպես նաև քաղաքային մատենադարաններում պահվող հայերեն ձեռագրերը, գրում նոր գիտական աշխատություններ և անընդհատ հարստացնում իր հիմնական գործերը։

Հայերեն ձեռագրերի աշխարհը իր տարերքն էր, իր կյանքը. այդ զգացվում էր հաճախ նույնիսկ իր հասարակական աշխատանքների ընթացքում, ամենուրեք նա դիմում էր մեր ձեռագիր գանձերին։ Այդ տեսակետից հետաքրքրությունից զուրկ չէ նշել այն մասին, որ երբ 1942 թվականի սեպտեմբերի 28-ին Նյու-Յորքում Հայկական հանձնախմբի նիստ էր գումարվել՝ հավաքված գումարը տարբեր նպատակների օգտագործելու համար, երկար վեճերից հետո անցավ Գարեգին արքեպիսկոպոսի առաջարկը և գումարի 50 տոկոսը հատկացվեց քաջարի Կարմիր բանակին, 30 տոկոսը արտասահմանի աղետյալներին և 20 տոկոսը Սովետական Հայաստանին։ Սակայն վերջում նա նկատեց, որ ոմանք սրտնեղած են մեկնում նիստից, ուստի ասաց. «Սպասեցե՛ք, ձեզ մի լավ լուր պիտի տամ։ Ի զարմանս բոլորի, նա սեղանի գարակից հանեց հայերեն մի գրչագիր և սկսեց խոսել ձեռագրի պարունակության, գրողի ու գրչության արվեստի մասին և ձեռագրից կարդաց մի շարք գեղեցիկ խրատականներ։

—Սիրելի՛ք,— ասաց սրբազանը,— ուզում եմ որ հոդո՛վ ապրեք, մեր նախնիքների հոգով, իրար իբրև եղբայր սիրեք և անցավոր բաների լկապեք ձեր հոգին, այլ հոգեկան ու մնայուն իրողությունների։ Զեզ չե՛մ թողնի մինչև որ հաշտվեք։

Այս ուշագրավ իրողությունը հուշագրող Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը ապա գրում է. «Ձեռագրի մասին իր տված բացատրություններուն, անկե ըրած-մեջբերումներուն և իր սրտաբուխ հայրական խոսքերուն առջև՝ կիրքերը խաղաղեցան, ատելությունները չքացան, անհասկացողությունները վերցվեցան։ Ժողովականներ համբուրեցին Սրբազանին Աչք և իրարու ձեռք սեղմելե հետք՝ եղբայրական ուրախ ու հաշտ սրտով մեկնեցան։

Երբ ամենքը զացին, Սրբազանը ըսավ.

---

23 Բարգեն արքեպիսկոպոս, «Ցուցակ ձեռագրաց Անկյուրիոյ Կարմիր վանուց և շրջակայից», տպ. Անթիլիաս, 1957։— նույն հեղինակի «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային մատենադարանի հայոց», տպ. Անթիլիաս, 1961։

«Տեսա՞ր ինչպես հրաշք գործեց հայ ձեռագիրը»[24]։

Հանգիստը իսկապես որ Նրա համար անհանգստություն էր պատճառում. փոխանակ Իր հանգստի մասին մտածելու, 80 տարեկանի մոտ այդ նշանավոր ալեորը մի նոր պատասխանատու ծանր պաշտոն էր ստանձնում. դառնում էր Տանն Կիլիկիո Կաթողիկոս և վերանորոգչական մեծ աշխատանք ծավալում Անթիլիասը հայագիտության խոշոր մի կենտրոն, նոր մի Գլաձոր դարձնելու համար։ Իր վարչական բազմապիսի ծանր գործերը, տաղտկալի ժողովներն ու այլ տիպի աշխատանքները ամենևին արգելք չեն կարողանում լինել, որ նա մեծ եռանդով Իր ժամանակի մի մասը նվիրի Իր սիրելի ձեռագրագիտական գործերին։

Ամեն մի ձեռագիր Նրա ասելով Իր կյանքի մի մասն էր կազմում։

1945 թվականի փետրվարի 5-ից սկսած անհարմար բեռնատար նավով Ատլանտյան օվկիանոսը մեկ ամիս ճեղքելուց հետո, Ամերիկայից պետք է հասներ Իր Կաթողիկոսական Աթոռ՝ Անթիլիաս։ Տաժանելի ու հոգնեցուցիչ ճանապարհորդություն էր այդ, պատերազմը դեռևս շարունակվում էր, ու թշնամի ընդծովյաներ հարձակման էին ենթարկում նավը. ահազանգը հնչում է, նավի սակավաթիվ անձնակազմը խուճապի է մատնված։ Այդ ծանր պահին սակայն Գարեգին Կաթողիկոսը շտապով դուրս է հանում պայուսակից մի փոքրիկ ձեռագիր և վարդապետական մի լանջախաչ, որն անցկացնում է Իր վզից և հուզված ասում.

— Այս երկու ավանդները ինձ տրվեցին, որպեսզի երբ էջմիածին գնամ, հանձնեմ նրանք Ամենայն Հայոց Հայրապետին։ Դրանք մեր սրբություններն են, եթե վտանգի ենթարկվենք և մեռնեմ, թող նրանց հետ միասին օվկիանոսի անդունդը իջնեմ։ Դրամապանակս դեն շպրտեցի. դա ինչ նշանակություն. սա փոքր գրչագիրը իմ կյանքի մի մասն է, իմ հոգու հետ կապված, իմ էությունը»։

Խաղաղությունը վերահաստատվել էր արդեն օվկիանոսի վրա, սակայն Գարեգին Ա Կաթողիկոսը ամբողջ օրը ձեռագիրը Իր ձեռքում էր պահում, թղթատում և կարդում էր։ Գիշերն իսկ նա լանջախաչը Իր վզին և ձեռքերով պինդ բռնած գրչագիրը Իր կրծքի վրա քնել էր, միշտ պատրաստ լինելով, որ կրկին ահազանգ կհնչի[25]։

Եվ իսկապես հայ ձեռագիրը Նրա էությունն էր, Նրա հոգեհատորը...

Երբ Գևորգ Զ-ի կաթողիկոսական ընտրության և օծման նախապահելու համար Գարեգին Ա Կաթողիկոսը կրկին Իր սիրելի Հայրենիքումն էր գտնվում, դարձյալ ժամանակ էր ստեղծել ավելի քան երկու շաբաթ, աշխատելու Երևանի պետական Մատենադարանում, ուր մուտք էին գտել Իր այնքան սիրելի ձեռագրերը, և որոնց հավաքման և ուսումնասիրման մեծ վաստակ ուներ նաև ինքը։ Ի տես հայ պետականության հայ ձեռագրերի հանդեպ ցուցաբերած մեծ խնամքի և հոգատարության, որի շնորհիվ Մատենադարանում ավելի քան կրկնապատկվել էր ձեռագրերի թիվը, Գարեգին Ա Կաթողիկոսը սրտի անհուն հրճվանքով Մատենադարանի տպավորությունների մատյանում ի միջի այլոց թողել է նաև հետևյալ տողերը 1945 թվականի հուլիսի 18-ին.

«Մեր ազգային ամենամեծ հարստությունը, որ ժառանգություն ենք ստացել մեր հայրերից, ձեռագրերի ժողովածուներն են։ Ուրախ ենք, որ այդ հարստության ամենամեծ մասը գտնվում է մեր Հայրենիքում։ Մեր տաս տարվա բացակայության, ոչ միայն ճոխացել է մեծ չափերով պետական գրադարանի ժողովածուն, այլ գիտության պահանջների համեմատ ցուցակների մշակմամբ ըստ բովանդակության, ըստ հեղինակների, թվականների և այլն... ամենամեծ դյուրությունն է ստեղծված գիտական աշխատողների համար իրենց ուսումնասիրությունների նյութերը հավաքել ժամանակի մեծ խնայողությամբ... Կմաղթենք, որ այս հաստատությունը ամենայն կերպով ծառայե հայ մշակույթի, պատմության և հին գրականության, արվեստի մշակության գործին և աղբյուր հանդիսանա նոր վերածնության և նոր ոսկեդարին, որ հավատում եմ, թե սկսվել է արդեն և մեծ թափով պիտի զարգանա»։

Գարեգին Ա Կաթողիկոսի համար հոգեկան սնունդ էին հանդիսանում հայերեն ձեռագրերը։ Փաստ է, որ Նա շատ անգամ մոռանում էր ճաշելն իսկ և տարված ձեռագրերի աշխարհով, չէր իսկ մտածում Իր առողջության մասին։ Այդպես է եղել Նա սկսած Իր երիտասարդական հասակից մինչև Իր կյանքի վերջին շրջանը։ Այս կապակցությամբ կարծում ենք, որ ավելորդ չի լինի ծանոթանալ մի երկու փաստերի հետ, որոնք գրված են ականատեսների կողմից։

1914 թվականի փետրվարի 14-ին Ուրմիայից Խորեն վարդապետ Լաղարյանը Գարեգին վարդապետ Հովսեփյանցին գրած իր նամակում բարձր գնահատելով Նրա կատարած գիտական հայրենանվեր գործունեությունը, ի միջի այլոց գրել է հետևյալը. «Ջնայած այն բոլոր անհարմարություններ-

---

24 Դեռեռիկ եպիսկոպոս, «Հուշեր Գարեգին Կաթողիկոսեն, օրագրի էջեր», Անթիլիաս, 1955, էջ 27։

25 Նույն տեղում, էջ 43։

ին և կրածդ նեղութիւններին, ամեն օր Ս. Հռիփսիմեի վանքից Մայր Աթոռի մատենադարանը մոտավորապես մի վերստ ճանապարհ, ոտքով գնում դալիս և շատ անգամ էլ մի պատառ հաց չէիք ուտում...»[26]։

Այդպես էր անցել նրա երիտասարդությունը։

Սակայն, ինչպես ասացինք, նա նույնը մնաց նաև իր ծերության հասակում։ 1947 թվականի օգոստոսին Գարեգին Ա Կաթողիկոսին շորրորդ անգամ լինելով բախտ էր վիճակվել գնալ Երուսաղեմ, այս անգամ արդեն իր օգնականներով և մեծ ոգևորությամբ ուսումնասիրել մատենադարանի հարուստ ձեռագրերը։

Ականատես մեկը հետևյալ ձևով է նկարագրել իր հուշատետրում Երուսաղեմում Գարեգին Կաթողիկոսի կատարած աշխատանքները.

«Վեհին ուշադրությունը չէ կարելի որևէ խնդրո վրա հրավիրել. Ան նույնացած է ձեռագրերուն հետ։ Անոնք հայ ժողովուրդի ամենեն թանկարժեք հարստություններն են։

Վեհը շարունակ աշխատանքի մեջ է, ձեռագիրները կկարդա, կչափե, կնոթագրե, «նկատողություններ կանի»։

Ջինք այս վիճակին մեջ դիտող մը հոգեկան անասելի հրճվանք կունենա։

Ներս կմտնե միարան մը.

— Վեհափա՛ռ Տեր, ճաշի ժամանակն է, հրամեցեք։

— Էս բոպեիս։

Վեհը կշարունակե իր պրպտումները։

Վայրկյանները կսահին։

— Վեհափա՛ռ, ճաշը կպաղի, հրամեցե՛ք։

— Արի՛, դու տես ի՞նչ արվեստ է սա, ինչ ճարտար մատներով գրված։

Ու վեհը կշարունակե իր ուսումնասիրությունները...։

Կյուրեղ սրբազան պատրիարքը ներս կմտնե.

— Վեհափա՛ռ Տեր, հրամեցե՛ք ճաշի։

— Ճաշի՞, դեռ նոր ճաշել ենք, ճաշն ի՞նչ անեմ։

— Չէ Վեհափառ, վեց ժամ եղավ, ժամը երկու է արդեն։

— Ջեմ հասկանում ժամը ի՞նչ կապ ունի ճաշի հետ, թողեք ինձ իմ աշխատանքների, իմ հոգու ապրումների հետ...»[27]։

Այսպիսի անձնուրաց և նվիրված էր նա դեռևս 80-ամյա հասակում, իսկ ուրիշներ այդ տարիքում միայն իրենց հանգստի մասին կարող էին մտածել։ Մարդ ակամայորեն հիշում է ԺԱ դարի վերջի և ԺԲ դարի սկզբի միջնադարի հայ մեծ մտածող Հովհաննես Սարկավագ Իմաստասերին, որի մասին ԺԳ դարի հայ նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրում է. որ օրեր շարունակ նա Հաղբատի վանքի ձորում գտնվող մի քարայրում փակվելով զբաղվել էր ձեռագրերի ուսումնասիրությամբ. երբ օրեր անց բացում են քարայրի դուռը և հարցնում նրան, թե ինչո՞վ է սնվել այդ օրերին, Հովհաննես Սարկավագը ցույց է տվել իր կարդացած ձեռագրերը և ասել. «Այդ է իմ կերակուր և ըմպելի. զոր կերայ և արբի պատուրս զայսոսիկ»[28]։

Գարեգին Կաթողիկոսը նոր մի Հովհաննես Սարկավագ էր...

Անողոք հիվանդությունը երբ անկողնին էր գամել մեծ գիտնականին, նա երկար, շատ երկար ժամանակ չէր կարող հաշտվել դաժան իրականության հետ։ Իրեն հանգստանալ պարտադրող բժիշկներին հաճախ ասում էր խոր հուզմունքով. «Դատարկ նստել չեմ կարող, դա մահ է ինձ համար։ Եթե պիտի չկարենամ Ազգիս ու եկեղեցուս ծառայել, էլ ինչո՞ւ ապրեմ, թող մեռնեմ»։

Իր ամենացավատանջ պահերին իսկ նա իր սիրտանքը սիրում էր գտնել իր անբաժան ու հավերժական ձեռագրերի մեջ։

Հայ և բյուզանդական մանրանկարչության հայտնի մասնագետ, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր օրիորդ Սիրարփի Տեր-Ներսեսյանը այսպես է նկարագրում Վեհի կյանքի վերջին շրջանի ապրումները.

«Մինչև վերջին ամիսները միտքը պահած էր իր հատակությունն ու թարմությունը։

Իր տառապանքին մեջ, իր մասնավորապես սիրած նկարիչներեն կամ ձեռագիրներեն մեկուն հիշատակությունը կվերակենդանացներ զինք և իր աչքերը կփայլեին երիտասարդության շրջանի կենդանությամբ»[29]։

Այո՛, մինչև վերջ այսպես ապրեց Գարեգին Ա գիտնական Կաթողիկոսը, քանի որ ձեռագրերի աշխարհը նրա կյանքն էր, նրա էությունն ու հոգին։

Նա այդպես էլ շիջավ, սակայն մնաց ու շարունակում է մնալ մեր հայերեն ձեռագիր գանձերի անգուգական խուզարկուն։

---

26 Հայկական ՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան Ձեռագրական Մատենադարանի դիվան, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցի թղթապանակ, № 95, վավերագիր № 401, 2ա։

27 Դերենիկ Եպիսկոպոս. «Հուշեր...», էջ 75։

28 Կիրակոս Գանձակեցի. «Պատմություն Հայոց», աշխատասիրությամբ Լ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 117։

29 Սիրարփի Տեր-Ներսեսյան. «Ակնարկ մը...», «Հասկ», 1952, է—Բ, էջ 270—274։

(Շարունակելի)